ՓԱՅԼԱԿ ԾԻԱԾԱՆ

(Գ. Լսարաձի ուսանող)

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Կառուցումի խոր տենչերով հպարտ ոգիդ թև է առել...
Կերտում ես քո գալիքը մեծ և ստեղծում երջանիկ կյանք,
Անցյալիդ սև մոխիրների հետքն ես արդեն իսպառ ջնջել...
Վերածնվում ես նորից նոր, ստեղծագործ ի՛մ Հայաստան:

Սովետական վառ արևի ջինջ շողերն են քեզ սնուցում,
Զարդ ես կապում անուշաբույր ծաղիկների պսակներով,
Ստալինյան կուռ դաշինքով մեջդ ամուր գոտեպնդում...
Ազատության անխոնջ մարտիկ, հերոսածին ի՛մ Հայաստան:

Ամոքվել են վշտերդ բյուր, վերքեր չունես մարմնիդ վրա,
Անում ես դու նոր հասակով, նոր խոյանքով վեր ընթանում
Քո երկնամերձ Արարատի գագաթն ինչպես հոգեհմա...
Հին օրերում՝ սև ավերակ, այսօր՝ շքեղ ի՛մ Հայաստան:

Քեզնից հեռո՞ւ, քեզ շա՞տ մոտիկ սրտեր կան դեռ ցուրտ սիբիրում,
Որ դիտում են պայծառ ուղիդ, տենչում են քեզ երբ հաղթական,
Քո կարոտի և քո սիրո զգացմունքով են բաբախում...
Եվ դեռ պանդուխտ այդ սրտերի հույսի փարոս, ի՛մ Հայաստան:

Փառապսակ քո նակատին հաղթանակի աստղն է շողում,
Նոր ջահեր են այժմ վառվում ուղուդ վրա հերոսական.
Մենք սիրում ենք քեզ անսահման, մեր աչքերը քեզ են նայում...
Դու նոր կյանքի անուշ երկիր, լույսի ակունք, ի՛մ Հայաստան: